Հայ-Ռուսական համալսարանում գործող
Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123)

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ՀԱՅԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Սարգիս Արմենի Արմենակյանի՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման համար» վերտառությամբ՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման ունի ակնհայտ արդիականություն: Դա պայմանավորված է հետազոտման առարկա հարցերի շրջանակով, որոնք ունեն տեսական ու գործնական նշանակություն: Այսպես, ժամանակակից իրավական համակարգերի կայացման ու զարգացման վրա էական ազդեցություն է թողել հռոմեական իրավունքը, որը վայելում է մեծ հեղինակություն հին պատմական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Դա մարդկության պատմության մեջ իրավական մտքի ու հայացքների հավաքական մի ամբողջ ժառանգություն է, որը ռեցեպցիայի միջոցով ինչպես անմիջականորեն, այնպես էլ անուղղակիորեն իր դրական ազդեցություն է ունենում իրավագիտության և օրենսդրության զարգացման վրա:

Հռոմեական իրավունքի ռեցեպցիան եվրոպական իրավական համակարգի կատարելագործման առումով ունի կարևոր հիմնարար ազդեցություն ոչ միայն իրավական համակարգի ժամանակակից ինստիտուտների կայացման ու զարգացման գործընթացների մասով, այլև՝ հասարակական հարաբերությունների կարգավորման կիրառական նշանակությամբ:

Յուրաքանչյուր պատմական ժամանակահատված դիտարկվում է որպես տվյալ ժամանակաշրջանի հետ կապի իմաստավորում, և այդ կապի միջոցով է բացահայտվում, այդ թվում իրավական երևույթների պատմական իմաստն ու նշանակությունը:

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ կատարված հետազոտությունների շրջանակում հռոմեական իրավունքի ռեցեպցիան գործնականում համարժեք արձագանք չի ստացել հատկապես եվրոպական իրավունքի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից:

Ասվածը պայմանավորված է նաև գրախոսման ներկայացված աշխատանքի հետազոտման նպատակի ու խնդիրների առաջադրմամբ:

Եվ այս առումով, կարծում եմ, որ եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման վրա հռոմեական իրավունքի ազդեցության գնահատման ու դրա արժեքանական նշանակության բացահայտմանն ուղղված յուրաքանչյուր գիտական հետազոտություն անկասկած համակարգային նշանակություն ունի հատկապես ազգային իրավական դոկտրիններում իրավական այդ ինստիտուտի ու երևույթի վերաբերյալ տեսական և միասնական մոտեցումների ձևավորման ու համակարգման համատեքստում:

Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի ու դրա ազդեցության գնահատման բովանդակային նշանակության շուրջ առկա գիտական բանավեճերը շարունակվում են նաև մերօրյա ժամանակներում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ եվրոպական ընդհանուր իրավունքում բացակայում է հիմնավոր հայեցակարգ ինչպես այդ իրավունքի գիտական ռեցեպցիայի իմաստավորման առումով, այնպես էլ դրա իրավական բովանդակության ու նշանակության միասնական իրավընկալման տեսանկյունից:

Սակայն, ներկա ժամանակաշրջանում հետևելով իրավագիտության ընդհանուր ավանդույթներին, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից աշխարհակարգի հետ առնչվող իրողություններն ու դրանցով պայմանավորված իրավական գործընթացների առկայությունը, կարծում եմ, պետության և հասարակության զարգացման ուղիների փոփոխություններն ինքնին թելադրում են հասարակական հարաբերություններում առավել համարժեք միջոցների որոնման

անհրաժեշտություն, որոնք պետք է ձևավորվեն նոր հայացքների ու տեսակետների հենքի վրա. ինչպիսին է հետազոտման առարկա հռոմեական իրավունքի ռեցեպցիայի ու դրա ազդեցության վերաբերյալ գիտական հետազոտությունները:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝ հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վերահիմաստավորումը եվրոպայի ընդհանուր իրավունքի ձևավորման համատեքստում. այդ իրավունքի ազդեցության ուղղությունների ու սահմանների սահմանումը. այդ ազդեցության վերաբերյալ առկա ճյուղային առանձնահատկություններով պայմանավորված տարբեր հայացքների ու մոտեցումների համակարգային հետազոտությունները, հռոմեական իրավունքի ռեցեպցիայի որպես իմացաբանական ու իրավական միջոցի էության բացահայտումը և այլն:

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ անդրադարձ կատարելով եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման ու զարգացման վրա հռոմեական իրավունքի ռեցեպցիայի ազդեցության ընդհանուր տեսություն մշակելու հիմնահարցին՝ համակարգային վերլուծություն է կատարել այդ իրավունքի կիրառական նշանակության վերաբերյալ իրավաբանական մոտեցումները, առաջադրել իրավունքի ժամանակակից իրավաընկալման ու դրա կիրառման մեթոդաբանություն:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Հեղինակի կողմից, որպես ատենախոսության հիմնադրույթներին առնչվող հրատարակված աշխատանքները համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու, միաժամանակ պատշաճ գիտական լեզվաոճով, հեղինակը կարողացել է ապահովել նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները, կարծում եմ, համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ աշխատանքն առանձնանում է բարվոք լեզվաոճով, դրանում հեղինակն իր իրավական մտածելակերպի առանձնահատուկ ու ինքնատիպ ոճով կարողացել է ապահովել ինչպես նյութի շարադրանքի որակը, այնպես էլ աշխատանքի հստակությունը՝ պայմանավորված սեփական դատողությունների հիման վրա ներկայացված մեթոդարանական ու տեսական-իրավական անհրաժեշտ փաստարկներով ու հիմնավորումներով:

Միաժամանակ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում եմ հետևյալ նկատառումները.

1. Ընդհանուր բնույթի նկատառումների մասով կցանկանայի նշել, որ հեղինակի կողմից ատենախոսական հետազոտության գիտական նորույթի կառուցվածքում պաշտպանության ներկայացվող 1-ին կետի դրույթի շարադրանքը լրացուցիչ հստակեցման կարիք ունի: Ասվածը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ գիտական նորույթի շրջանակում հեղինակի պնդմամբ՝ ռեցեպցիան հնարավոր է «(...) միայն ընդօրինակողի հստակ գաղափարախոսության պատճառով, որը թույլ է տալիս իրականացնել, ընդօրինակել ու յուրացնել օտար իրավական մշակույթը՝ ինստիտուտները, նորմերը, գաղափարները, հայեցակարգերը, կառուցակարգերը»:

Ներկայացված եզրահանգումը, կարծում եմ, լրացուցիչ պարզաբանման կարիք ունի, առավել ևս, որ այդ եզրահանգման վերաբերյալ աշխատանքի բովանդակային մասում գրեթե անդրադարձ չի կատարվել:

2. Այնուհետև, նույն ընդհանուր բնույթի նկատառումների շրջանակում անհրաժեշտ է նաև նկատել, որ ատենախոսության վերտառության և բովանդակության մեջ գերակշռում է վերացարկմամբ (աբստրակցիա) պայմանավորված որոշ ընդհանրացումներ, որոնք մասամբ են առնչվում հետազոտության առարկա հիմնախնդրին: Այս առումով, կարծում եմ, հեղինակի կողմից բավարար չափով չի հիմնավորվում, թե **հռոմեական իրավունքի ռեցեպցիան ինչ ազդեցություն է ունեցել եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման և զարգացման վրա:**

3. Աշխատանքի 1.2-րդ ենթագլխում ընդհանրացնելով **հռոմեական իրավունքի ուսումնասիրության նկատմամբ** շրջափուլային մոտեցման կամ հետազոտության պատմահրավական և դոգմատիկ եղանակների էության բացահայտման հիմնահարցերը (էջ 32-34), կարծում եմ, որ համակարգային ամբողջականության մեջ հեղինակի կողմից այդպես էլ անդրադարձ չի կատարվում ռեցեպցիայի տեսակների ու ձևերի բովանդակային նշանակությանն ու եվրոպական ընդհանուր իրավունքի զարգացման վրա դրանց ազդեցության գնահատման միջոցների ու առանձնահատկությունների հիմնախնդրին, մասնավորապես, խոսք կարող է լինել առաջնային ու երկրորդային տեսակների, ինչպես նաև՝ ա) հռոմեական իրավունքի նորմերի ու սկզբունքների ուսումնասիրության, հետազոտության, մեկնաբանության և յուրացման, բ) հռոմեական իրավունքի նորմերի գործողության մեջ դնելու ու կիրառման, գ) եվրոպական իրավական համակարգում և հատկապես իրավաստեղծ գործունեության շրջանակում հռոմեական իրավունքի մեթոդաբանության, հասկացությունների ու գաղափարների օգտագործման ձևերի մասին, որոնք կարող են դիտարկվել ռեցեպցիայի ապահովման էական միջոցներ եվրոպական իրավունքի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից:

4. Հեղինակն աշխատանքի 2-րդ գլխում՝ **մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման ու զարգացման հիմնական ուղենիշների, այդ թվում՝**

Արևմտյան Եվրոպայում jus commune (ընդհանուր իրավունքի) ձևավորման **համատեքստում ուսումնասիրության առարկա է դիտարկում** հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վերաիմաստավորման հարցը (էջ 91-108), սակայն աշխատանքի տեքստում այդպես էլ խորքային հետազոտության չեն ենթարկվում նույն հռոմեական իրավունքի փոխառնման հիմնախնդիրները որպես եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման ու զարգացման անհրաժեշտ գործոն ու պայման: Հենց այդ գործոնի կամ պայմանի վերաբերյալ գիտական արժանահավատ դատողությունները կարող են էական նշանակություն ունենալ և միաժամանակ դիտարկվել գրախոսվող աշխատանքի հետազոտության հիմնական տարր:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում քխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից, համապատասխանում առաջադրված նպատակներին ու խնդիրներին:

Ատենախոսությունը շարադրված է հասկանալի ու գիտական ոճով, հեղինակը ապահովել է նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ ինչպես նորույթի, այնպես էլ հիմնավորվածության չափանիշներով:

Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ **Սարգիս Արմենի Արմենակյանի՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման համար»** թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 գիտական թվանշանով՝ «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21 նոյեմբերի 2023 թ.

Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար

Ս.ԱՌԱՔԵԼՅԱՆ